



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկական համայնք

Թիվ 15/115

„04“ 12 2015թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք նեկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի
ղեկավարի կողմից 2015թվականի նոյեմբեր ամսվա արձակված
կարգադրությունը և ընդունված որոշումները:

Առդիր «4» թերթից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ
Ստորգրիվ 112.11/322/1-15
10 12 2015



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

„ 02,, նոյեմբերի 2015թ..

N 08-Ա

ՇԵՂԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հեղինե Հարությունյանի դիմումը:

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ

1. 2015 թվականի նոյեմբերի 2-ից լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի «Արմավիրի մանկապարտեզ» ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Հեղինե Հարությունյանի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղապետարանի առաջատար մասնագետ՝ Ալավերդի Կարապետյանին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ. Ֆ. Մարգարյան

2015թվականի նոյեմբերի 02

Գ. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» նոյեմբերի 2015 թվականի N 70-Ա

ԿԱԹԻ ՊՈՒՆԿՏԻ և ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ԿԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի-N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 20-ի թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Ավետիք Գազիկի Ավետիսյանին ըստ կտակի ժառանգության իրավունքով, պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 033-017/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 8 փողոցի թիվ 41/1 .
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առջև՝ անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Ռ.Ֆ.Մարգարյան

2015 թվականի նոյեմբերի 26
գ. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԳԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» նոյեմբերի 2015 թվականի N 69 -Ա

ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ԿԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հազ սցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Համբարձում Գալուստի Հովհաննիսյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 04-020-004-001 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 33 փողոցի թիվ 2 հողամաս.
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

2015 թվականի նոյեմբերի 06
գ. Արմավիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 Լոյսերի 2015 թվականի N66-Ա

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N66-Ա
«ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԶՊԱՀՊԱՆԿԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՆ ՆԿԱՏԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով՝

ՈՐՈՇՐՈՒՄ ԵՄ

1. Արմավիր համայնքի ղեկավարի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի N66-Ա որոշման հիշյալ «Մնացական Ռաֆիկի Միքայելյանի» բառերից հետո ավելացնել «, հանում Ռաֆիկի Միքայելյանի և Արմենուի Աշոտի հաջաորդանի» բառերը: Հղումի «ոչ ընտանիքին» բառերը փոխարինել «իրենց» բառով:
2. Որոշման 1-ին կետի
 - ա) «Մնացական Ռաֆիկի Միքայելյանի» բառերից հետո ավելացնել «, հանում Ռաֆիկի Միքայելյանի և Արմենուի Աշոտի հաջաորդանի» բառերը,
 - բ) «ընտանիքի» բառը հանել տեքստից,
 - գ) «430.90 քմ ընդհանուր մակերեսով շենք շինությունների» բառերը փոխարինել «157.0 քմ բնակելի տան, 45.8 քմ ընդհանուր մակերեսով հարթակների, 19.0 քմ ջրավազանի, 32.40 քմ օսանդակ կառույցի և 176.70 քմ ընդհանուր մակերեսով ծածկերի» բառերով:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:



[Handwritten signature]

Պ. Մարգարյան